

ՊԵՏՐՈՍ ԲԵՂԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ

Ոժանդակ ընթերցարան հայկական
մերձավոր Աֆյուրքի դպրոցների համար

ԷԴԻՏ
ՊՐԻՆՏ
ԵԿՆԱՅԻՆԳՐՈՒՄ
ԵԿՆԱՅԻՆ
ԵԴԻՏ
ՔՐԻՆՏ
ԲՈՒԿՍ
ԲՈՒԿՍ
Երևան 2012

Այս գիրքն օգտագործողին

Սիրելի՛ սփյուռքահայ բարեկամ, այս գիրքը գրված է հատկապես քեզ համար: Վերցրու՛, ուշադիր կարդա՛ և վայելի՛ր հայոց լեզվի գեղեցկությունը և շքեղությունը: Հանդգված եմ, որ քեզ կպարուրեն լուսավոր զգացմունքներ, հոգիդ կջերմանա, կլցվի հայրենիքով, աչքերդ կայրվեն կարոտից, և հպարտությամբ կլցվես, որ դու մասնիկն ու շարունակողն ես դժվար ու հետաքրքիր պատմության:

Այս գիրքը, ինչպես տեսնում ես, մի ընթերցարան է, որ հայերեն ավելի լավ խոսել ու գրել է սովորեցնելու:

Սակայն սա սոսկ դասագիրք կամ ընթերցարան չէ: Այստեղ մեր հայրենիքն է ապրում՝ իր ազնիվ ու խիզախ գավակներով, հերոսական դեպքերով, ավանդություններով, տոներով ու ավանդույթներով, լավատեսական, զվարճալի պատմություններով, լուսավոր ապագայի հավատով: Դրանց ծանոթանալով՝ դու քեզ ավելի հայ ես զգալու:

Երբ ես քո տարիքին էի, հետաքրքիր գրքերը մի շնչով էի կարդում և հետո էլ ավստում էի, ի՞նչ շուտ ավարտվեց: Այնուհետև այն դնում էի սեղանիս և ուշադիր վերընթերցում, վայելում, մտածում ու երագում...


Այս գիրքն այդպիսին է:

Դու նորից ու նորից կկարդաս այն և քո հեռուներից, կարոտով ու սիրով լցված, կմտածես հայրենիքիդ մասին, նրան օգտակար լինելու մասին:

<եղինակը քեզ թերևս ծանոթ Պետրոս Բեդիրյանն է: Նրա «Учебник армянского языка» դասագրքով ես զուցե դու հայերեն կարդալ ու գրել սովորել: Նա ուրիշ գրքեր էլ ունի, որոնցով օգնում է նաև մեզ՝ սփյուռքում ապրող աշակերտներին և ուսուցիչներին՝ մեր պատասխանատու առաքելության ծանապարհին:

Սիրով ու նվիրումով՝ ԹԱՄԱՐԱ ՄԱՅԵՎՈՍՅԱՆ
(Մոսկվայի Լազարյանների անվան դպրոցի
հայոց լեզվի ու գրականության ուսուցչուհի)

მნიშვნელობა



Դաս 1



*Ով Հայոց աշխարհ,
Հարազար, պայծառ,
Չավակներից օրեան,
Հավերժական հանգրվան:*

Սրանք մեր ազգային երգերից մեկի տողերն են, որոնք ամեն մի հայի սրտից են խոսում:

Մեր Հայոց աշխարհը հազարամյակների հեռավորությունից է գալիս:

Անգլիացի նշանավոր պատմաբան Դեյվիդ Մարշալ Լենգնի գիրքը վերնագրել է «Հայաստանը՝ քաղաքակրթության օրրան»: Այս ասելով Լեն-

գը նկատի է ունեցել նաև, որ Նոյն՝ իր տապանից Արարատ լեռան գագաթից է աշխարհի վրա բաց թողել կենդանի արարածներին:

Լենգի գրքի էջերը մեր շատ դարերի պատմությունն են ներկայացնում, մի պատմություն, որ լիքն է թե՛ փառավոր և թե՛ տխուր էջերով: Հայոց արքայից արքա Տիգրան Մեծը (Ք.ա. 140-55) ժամանակին ծովից ծով հսկայական տարածություններ է իր ձեռքի տակ պահել և ըստ պատմական ավանդության՝ իր գրաված չորս երկրների (*երկարորս*) թագավորներ է լծել իր կառքին: Բայց այսօր պատմական Հայաստանից քարտեզի վրա մի փոքր կտոր հող է միայն մնում, ուր հայ ժողովուրդն ապրում է 29.000 (քսանինը հազար) քառակուսի կիլոմետրի վրա, և ուր երկի ավելի շատ քարեր կտեսնեք, քան «դրախտ-այգիներ»:

Երբ ես հյուրեր եմ ունենում, մանավանդ արտասահմանից, նրանք խորհուրդ են տալիս մի անգամ գոնե Հայաստանի հարավում գտնվող (*չտուճոճոճ*) Մեղրի գավառ այցելել: Այնտեղ կտեսնեն, թե ինչպես հայրենի աշխատասեր ժողովուրդը, մեջքով հող կրելով ու ժայռերի վրա փռելով, խաղող, դեղձ, նու՛ն է ամեցնում: Հրաշք այգիներ, որոնք շուրջը գտնվող լեռների վրա բուսականության հետք անգամ չի երևում:

«Հայաստան, երկիր դրախտավայր»:

դրախտ – рай
 մա նազանդ – тем более что
 արտասահման – заграница
 գո՛նն – хотя бы
 գազառ – մի երկրի վարչական մասը – провинция
 հայրենի – հայրենիքի, հայրենիքում ապրող – родины,
 живущий на родине
 աճեցնել – խնամելով մեղրեղ բերել – выращивать
 հրաշք – շքեանված-չափած բան – чудо
 բուսականություն – բույսերի ամբողջությունը – растительность,
 флора
 հետք – ուրրի կամ չեռրի բողբոջ մշանը – след
 ա՛նգամ – նո՛ւյնիսկ – даже
 դրախտաձայր – райская местность; рай

Թիվ 1 աղյուսակ (օժանդակ բայ)

եմ ենք էի էինք
 ես եք էիր էիք
 է են էր էին

= Օժանդակ բայի (вспомогательный глагол) այս ձևերը միասին (слитно) են կարդացվում, արտասանվում, ապրում են (апрѳмѳ), ապրում ես, ապրում եք... ապրում էի, ապրում էիր, ապրում էր... մոտ են (мѳтѳ), մոտ ես, մոտ է... մոտ էի, մոտ էիր, մոտ էր...

Թիվ 2 աղյուսակ (ներկա ժամանակ)

ապրում եմ
 տեսնում եմ
 փախչում եմ
 զգում եմ
 բարձրանում եմ
 մոտենում եմ
 գալիս եմ

= Վերջին բայի նման են խոնարհվում նաև՝ լալ, տալ բայերը (լալիս եմ, տալիս եմ):